ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի)

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Հրավերը ստացվել է ԱՄԷ էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար Սուհեյլ Մոհամմադ Ալ Մազրուեյից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Համաշխարհային երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների ցուցահանդեսին և համաժողովին մասնակցություն:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվել է ՀՀ-ԱՄԷ ենթակառուցվածքային համագործակցության ողջ պորտֆելը հետևյալ շեշտադրումներով՝

- Արևային կուտակիչ կայանների կառուցման հարցում ԱՄԷ առաջատար փորձն ուսումնասիրելու և կիրառելու հետ կապված հարցեր,
- Ջրային ենթակառուցվածքների արդիականացման, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման, ջրային ոլորտի խնդիրներին ուղղված ԱՄԷ փորձի ուսումնասիրման և տեղայնացման հետ կապված թեմաներ,
- Ավիացիոն հաղորդակցության առկա վիճակը, կանոնավոր ուղիղ չվերթերի հաճախությունն ավելացնելու, ինչպես նաև ԱՄԷ թռիչքային անվտանգության սև ցուցակից Հայաստանի դուրս գալու հետ կապված առաջարկները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Երկկողմ ձևաչափով հանդիպում է տեղի ունեցել ԱՄԷ էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար Սուհեյլ Մուհամմադ Ալ Մազրուեյի հետ: Երկուստեք ընդգծվել է հայ-էմիրաթական զարգացող հարաբերությունները և ընդլայնվող տնտեսական հարաբերությունների օրակարգում ենթակառուցվածքային ոլորտում գործընկերության խորացման կարևորությունը: ԱՄԷ նախարարը նշել է, որ Հայաստանն ԱՄԷ-ի համար բարեկամ երկիր է, որի հետ համագործակցության խորացման լայն հնարավորություններ կան: Առանձնահատուկ կարևորվել է Հայաստանում արևային կուտակիչ կայանների կառուցման հարցը, որի հետ կապված ԱՄԷ առաջանցիկ փորձը կարող է օգտակար լինել: Նախարար Ալ Մազրուեյի հանձնարարությամբ ԱՄԷ ոլորտային ընկերությունների կողմից հանդիպումներ են նախաձեռնվել, մասնավորապես՝ հանդիպում է եղել «Etihad Water and Energy» ընկերության գործադիր տնօրեն Յուսեֆ Ալ Ալիի հետ՝ քննարկվել են կուտակիչ կայանների կառուցման առաջարկները:

Հանդիպում է կայացել «Etihad Rail» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շադի Մալաքի հետ՝ քննարկելու երկաթուղային շինարարության ոլորտում հնարավոր համագործակցության հարցեր:

Հանդիպում է տեղի ունեցել «Mohamed bin Zayed Water Initiative» հիմնադրամի գործադիր տնօրեն Այեշա Ալ Աթիկիի հետ՝ քննարկվել են հիմնադրամի կողմից աշխարհի տարբեր երկրներում ջրի սակավության խնդիրների դեմ պայքարի մեթոդները, նախաձեռնությունները: Երկուստեք պատրաստակամություն ենք հայտնել շարունակել երկխոսությունը՝ առավել գործնական հարթությունում համագործակցելու ուղղությամբ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պայմանավորվել ենք հետևողականորեն աշխատել վերը նշված ենթակառուցվածքային ուղղություններով համագործակցությունը խորացնելու ուղղությամբ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

10.07.2025թ.